ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

03.03.2020թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան,

ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Վարդան Գրիգորյան ),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով նախագիծը դնել շրջանառության մեջ:

Կանխավ շնորհակալ ենք:

Ազգային ժողովի պատգամավորներ՝ Վարդան Գրիգորյան

Հովիկ Աղազարյան

Միքայել Մելքումյան

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.**

1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին » 2014 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-1-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի «կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած» բառերը հանել:

2.Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 7.2-րդ կետով.

«7.2) Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# « ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ » ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

**Նախագծի նպատակը**

Նախագծի նպատակներն են Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ հռչակված սոցիալական պետության, հավասարության և խտրականության բացառման սկզբունքների կենսագործումը, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավորների կենսաթոշակային իրավունքների իրացման պայմանների իրավաչափության ու սոցիալական արդարության ապահովումը, Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային իրավահարաբերությունների կիրարկման հարաբերությունների հստակեցումը:

**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Լրանում է ՀՀ Գերագույն խորհրդի 30-ամյակը՝ պատեհ առիթ արձանագրելու, որ գործող պետական կենսաթոշակային և պետական պաշտոններ զբաղեցրած անձանց եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների մասին օրենսդրությամբ ՀՀ անկախությունը և Հայաստանի երրորդ հանրապետության պաշտոնական մեկնարկը հռչակած խորհրդարանի պատգամավորներից մի քանիսը, որոնք օբյեկտիվ պատճառներով լրիվ 5 տարի չեն աշխատել Գերագույն խորհրդում, զրկվել են պատգամավորների համար նախատեսված կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Այսպես, Գերագույն խորհրդի գործունեության ժամանակ չի գործել ՀՀ սահմանադրությունը (այն ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին), հետևաբար ՀՀ ԳԽ պատգամավորների նկատմամբ «սահմանադրական ժամկետ» իրավանորմը կիրառելի չէ: Մյուս կողմից, ՀՀ ԳԽ պատգամավորները ՀՀ սահմանադրության ուժով իրավունք ունեն կենսաթոշակային իրավունքից օգտվել նրանց կենսաթոշակային իրավունքը հասնելու օրվանից: Սակայն գործող օրենսդրությամբ ՀՀ ԳԽ

պատգամավորներին թույլատրվում է կենսաթոշակ ստանալ ՀՀ ԳԽ պատգամավորի 5 տարվա ստաժի դեպքում, ինչը, մեր կարծիքով,արդար չէ:

Պակաս կարևոր չենք համարում այն հանգամանքը, որ Գերագույն խորհրդի պատգամավորները, ի տարբերություն ԱԺ պատգամավորների, չեն վարձատրվել այն տրամաբանությամբ, որ այդ խորհրդարանը չի եղել արհեստավարժ, և պատգամավորները վարել են տարբեր պաշտոններ այլ կառույցներում: ԳԽ պատգամավորներն իրենց լիազորություններն իրացրել են՝ օգտվելով համեստ գործառութային վճարներից և ճանապարհածախսից, որոնք համարժեք չէին ոչ կառույցի կոչմանն ու կարևորությանը, ոչ էլ աշխատանքի այն իրական ծավալներին, որ կատարվում էր նորանկախ երկրի օրենսդրությունը նոր իրողություններին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կարծում ենք, որ օրենսդրության մեջ պետք է կատարվեն այնպիսի փոփոխություններ, որոնք բխեն ՄԱԿ-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների համընդհանուր հռչակագրով» և ՀՀ սահմանադրությամբ հռչակված ՀՀ քաղաքացու սահմանադրական իրավունքներից ու թավշյա հեղափոխության հռչակած արժեքներից:

Սույն նախագծի շահառուներ, տարբեր հաշվարկներով, կարող են լինել մեկ տասնյակից ոչ ավելի քաղաքացիներ, ինչը, ըստ էության, պետական բյուջեի վրա մեծ բեռ չի ենթադրում:

**Առաջարկվող օրենսդրական լուծումները**

Նախագծով առաջարկվում է համապատասխան փոփոխություն եւ լրացում կատարել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին » օրենքում սահմանել դրույթ, համաձայն որի ԳԽ պատգամավորները, 65 տարին լրանալու դեպքում հնարավորություն ունենան օգտվել օրենքով պետական պաշտոն զբաղեցրած անձանց համար սահմանված արտոնյալ կենսաթոշակ ստանալու իրավունքից:

**Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է իրացնել ՀՀ սահմանադրությամբ սահմանված երկրի սոցիալական պետության դրույթը, իրավահավասարության ու խտրականության բացառման սկզբունքները:

## ՏԵՂԵԿԱՆՔ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի փետրվարի 4-ին
Հայաստանի Հանրապետության Նախագահի
առարկությամբ և առաջարկությամբ

### ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակային ապահովությունը և այլ սոցիալական երաշխիքները

1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի՝
1) *(կետն ուժը կորցրել է 04.03.15 ՀՕ-14-Ն)*
2) Սահմանադրական դատարանի դատավորը՝
ա. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից,
բ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,
գ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում.
2.1) Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում առնվազն հինգ տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են համապատասխանաբար դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքով.
2.2) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.
2.3) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.
3) դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.
4) դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.
5) հատուկ քննչական ծառայությունում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը, որը պաշտոնից ազատվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.
5.1) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.
5.2) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայությունում առնվազն 10 տարի քննիչի պաշտոն զբաղեցրած անձը, որը պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված հիմքով կամ 63 տարին լրանալուց հետո՝ 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.
5.3) Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայությունում առնվազն 10 տարի քննիչի պաշտոն զբաղեցրած անձը, որը պաշտոնից ազատվել է «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.
6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.
7) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած ~~կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած~~ անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.
7.1) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած կամ վեց տարի Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.
<u>7.2) Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.</u>

8) սույն օրենքի հավելված N 1-ով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

9) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, Կառավարության անդամները, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորները, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազները, հատուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի ծառայողները՝ իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում նշված դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական կազմակերպություններում ապահովվում է բժշկական սպասարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն:

*(2-րդ հոդվածը լրաց. 19.05.14 ՀՕ-29-Ն, 01.12.14 ՀՕ-198-Ն, փոփ. 04.03.15 ՀՕ-14-Ն, խմբ., փոփ. 17.01.18 ՀՕ-43-Ն, փոփ., լրաց., խմբ. 07.03.18 ՀՕ-143-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-341-Ն, լրաց. 01.07.19 ՀՕ-101-Ն)*